48
(22x16)
148
375:7

Հ. Ս. Խ. Հ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԷՔ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՍԵԿՑԻՍ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ ԱՐՒԵՍՏԻ

(ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ, ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՉԵՌԱՐԻԵՍՏ)

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ

ՀԱՅ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Publicznaja Biblioteka
7/XI 1922
Մոսկվա, Մասկվա
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԵՏԱՂ ԱՐԽԻՎ ԳՐԱԳԱՐԱՆ
370
1954-ԾՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ № 2.

148-Կ9-Հ

ՏՊԱՐԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԷՋՄԻԱԾԻՆ—1922.

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ Լ ՍՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ

ԵՐԳ-ԵՐԺՇՏՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄՆ

ԵՐԳԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՈՒՂԵՑՈՅՑ-ՑԱՆԿ

Առաջին երեք տարիների համար.

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ ԵՒ Ա. ԽՈՒՄԲ

Երգերի անուններ	Աղբիւրներ
1. Փիսիկ-փիսիկ	«Փնջիկ» Ազատ Մանուկեանի, Ա. տեսար.
2. Արեգակը դուրս է եկել	Մանկ. երգեր Արշակ Տէր-Յովսէսեանի, Ա. տեսար.
3. Արև, արև, եկ, եկ	Դպրոցական երգեցողութեան Սպ. Մելիքեանի, Ա. տեսար.
4. Տիկ-տիկ-տիկ	Մանկ. երգեր Ա. Խաչատուրեանի
5. Արևի պէս ճիտ անենք	
6. Մենք առաջ շարժենք	
7. Պապի, տատի, չալ հաւիկ	«Փնջիկ» Ազ. Մանուկ., Ա. տեսար.
8. Ոնց էն հարում խնոցին	Մանկ. երգեր Ա. Տէր-Յովս., Ա. տեսար.
9. Վարդ եմ քաղել	Դասագ. երգ Սպ. Մելիք., Ա. տեսար.
10. Սար-սար	
11. Ծարի լանջը	«Քնար մանկական» երգ. Մ. Եկմալեանի և Յով. Ղազարեանի.
12. Կոտ ու կէս	«Փնջիկ» Ազ. Մանուկ., Ա. տեսար.
13. Ինչու կուլաս դու, գառնիկ	«Քնար մանկական».
14. Սիրուն թիթեռ	Մանկական երգեր Դ. Ղազարեանի
15. Աղջկերք, պար բռնեցէք	«Փնջիկ» Ազ. Մանուկ., Ա. տեսար.
16. Լուսինն էլաւ	» » Բ. տարի.
17. Սրագիլ	» Ա. »
18. Էյ կանաչ ախպէր	«Երաժշտական այբբենարան».
19. Դեռ ձուր է ծիծառ	«Փնջիկ»—Բ. տարի.
20. Ծիծեռնակը բոյն էր շինում	

Բ. ԽՈՒՄԲ (ԵՐԲՈՐԴ ՏԱՐԻ)

1. Դեղնած դաշտերին լիքել է աշուն	«Փնջիկ» Բ. տարի.
2. Կարմիր վարդիկ	Մանկ. երգեր Անտ. Մայիլեանէ
3. Հոտալիս ջան	Երգ. դաս. Սպ. Մելիքեանի.
4. Կաքաւիկ	«Փնջիկ», Գ. տարի.
5. Մարալ	Սպ. Մելիքեանի, Բ. տարի.
6. Գնացէք տեսէք ով է կերել ղէծ	
7. Սագիկ-մագիկ	«Փնջիկ», Ա. տարի.
8. Անձրև եկաւ.	«Էսքիզներ» Ռոմանոս Մելիքեանի.
9. Բարիս տակը քարուտ ա	«Բնար» Մ. Եկմալ. և Յոսէ. Ղազարեանի.
10. Արևն յարեցաւ ամպերին	
11. Մանի-մանի, ճախարակ	Մանկ. երգարան Ան. Տէր-Ղևոնդեանի.
12. Թալանեցին	«Գեղարիկ» Ժողով. մանկ. երգերի.
13. Փիսօն ու աքլորը	Սրշ. Տէր-Յովսէփեանի.
14. Ծիծեռնակին	Դ. Ղազարեանի.
15. Լուսը լուսացաւ	«Փնջիկ», Գ. տարի.
16. Էյ ջան, անցան	» » »
17. Բարի լուսի գանգեր	«Փնջիկ», Գ. տարի.
18. Մայիսին (ճամպա ուէք)	«Երաժշտ. այբբենարան».
19 Բացուել են գարնան	Տէր Ղևոնդեանի.
20. Մանուշակ	» »
21. Գեղեցիկ ու զով	Սրշ Տէր-Յովսէփեանի (չափ՝/ցով)

Գ. ԽՈՒՄԲ (ՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ)

1. Դաշտ ու այգին գեղին հագան	«Գեղարիկ».
2. Աշնան վերջին	Տէր-Ղևոնդեանի.
3. Ուլիր	»
4. Էս օր գութանը մերն է	Սպ. Մելիքեանի.
5. Ալագեազ	»
6. Թող քեզ ծածկեմ	«Գեղարիկ».
7. Կաունկները շարան շարան	«Փնջիկ», Գ. տարի.
8. Ծաղիկների երգը	» » »
9. Ի՞նչ կայ երնակ	» » »
10. Լուսնակն անուշ	Սպ. Մելիքեանի.

11. Արի, Մանան	«Փնջիկ» Ազ. Մանուկեանի, Ա. աւեր.
12. Քեզ եմ զովում	«Գեղարիկ».
13. Եկաւ գարուն	«Փնջիկ», Դ. տարի.
14. Ինչու բինգիոլը	«Էսքիզներ» Ռոմ. Մելիքեանի.
15. Սարի լանջը (կանոն)	«Երաժշտական Այբբենարան».
16. Կարօտ ենք տեսքիդ	
17. Ցող ու ծաղիկ կարան	
18. Զանգակների զօղանջը	
19. Ձիգ տու, քաշի, այ եզը	Կոմիտաս վարդապետի (Ա. Ձայնը)։

Իբրև ուղեցոյց ծառայում են հետեւեալ տպագրած հեղինակութիւնները, որոնցից և վերցրած են երգերը.

1. «Փնջիկ», մանկական երգեր Ազատ Մանուկեանի, Ա. Բ. Գ. և Դ. տեարները։
2. «Գեղարիկ», ժողովածու մանկական երգերի։
3. Երգեցողութեան դասագիրք Սպիրիդոն Մելիքեանի, IV և V տարի.
4. Մանկական երգեր Ա. Տէր-Ղեւոնդեանի I և II գիրք.
5. Էսքիզներ ժողովրդական երգերի, Ռոմանոս Մելիքեանի, 6 օպուսների մէջ.
6. Մանկական երգեր Անտոն Մայիլեանի, 2 օպուս.
7. Մանկական երգեր Արշակ Տէր-Յովհէփեանի, I և II տեարներ.
8. «Քնար» մանկական երգեր Մ. Եկմալեանի և Յովսէփ Ք. Ղազարեանի.
9. Մանկական երգեր Դ. Ղազարեանի.
10. «Երաժշտական այբբենարան», դասագիրք երգ-ձայնագրութեան Ռոմանոս Մելիքեանի և Ազատ Մանուկեանի։

Վերոյիշեալ ցանկից դուրս մնացած երգերի և հետեւեալ տարիների նիւթերի ընտրութիւնը թողնւած է դասատուներին ցանկութեան, հիմք ունենալով տրուած ծրագրի ակզբունքները։

ԱՐԽԻՎ

ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՁԵՌԱՐՒԵՍՏԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.

1. Искусство для детей—8 հատոր, թարգմ. անգլ. Н. Н. Живого
2. Пранг. Воспитание детей—6 հատ., թարգմ. В. Смирнов
3. Как рисовать кистью—16 տախտակ, թարգմ. գերմ. К. Вольтер
4. Аугсбург. Новая школа рисования—թարգմ. գերմ. Н. Н. Живого
5. Давайте рисовать—կազմեց Е. Буше
6. Рисование и лепка—В. И. Бейер
7. Лепка, что и как лепить—Тэдд
8. Давайте лепить—Е. Короткова
9. Давайте вырезать и наклеивать—Л. Е. Шлегера
10. Как вырезать из цветной бумаги—Е. Короткова
11. Как плести из тесьмы, рафии, стружек, изделия из биссера и пр.—составил Е. Коротков
12. Новый путь—Л. Тэдд
13. Normaler Gang für den Papparbeits—Unterricht—Dr. A. Pabst.

375.4

370
1954-ԾՐ

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑՈՒՄ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Երգեցողութիւնը մանուկների հոգեկան աշխարհի զարգացման կարևոր գործօններից մէկն է։ Նա մանուկների օրգանական պահանջն է կազմում, պահանջ՝ նոյնքան կենսական և անհրաժեշտ, որքան շարժումը, խաղերը կամ ծիծաղը նրանց մարմնական զարգացման համար։ Երգի միջոցով զարգանում են երեխաների շնչառութիւնն ու թոքերը, յիշողութիւնը, երաժշտական լսողութիւնը, գեղարուեստական ճաշակը։ Երգը նպաստելով երեխաների ֆիզիքական ու հոգեկան զարգացմանը, ընդհանրապէս ունի նաև ահագին դաստիարակչական նշանակութիւն, կանոնաւորելով մանուկների մէջ նրանց կամեցողութեան կենտրոնները, ընտելացնելով կարգ ու կանոնի, ճշտապահութեան և պատասխանելով նրանց չափի ու պարտականութեան զգացումը։ Երգն է, որ զարգացնում է երեխաների մէջ մարդասիրութիւն, սէր դէպի բնութիւնը, դէպի կենդանական աշխարհը, կարեկցութեան զգացմունք և ընդհանրապէս ձգտում դէպի վսեմն ու գեղեցիկը։ Ուստի և երեխաներին երգեցողութիւն աւանդելու գործին պէտք է մօտենալ շատ զգոյշ և զգաստ, աշխատելով ստեղծել մանուկների համար այնպիսի պայմաններ, որ հնարաւոր դարձնէին զարգացնելու նրանց ֆիզիքական, հոգեկան և գեղագիտական ունակութիւնները։

Երգեցողութեան աւանդման ընդհանուր ծրագիրը պէտք է համապատասխանէ երգի ռիթմի և մելոդիական բարդութեան աստիճանական զարգացմանը։

Երգի դասաւանդումն աշխատանքի դպրոցում պէտք է շաղկապուած լինի մեացած բոլոր առարկաների և աշխատանքների հետ մանաւանդ առաջին երեք տարին։ Երգը անպայման պէտք է յարմարեցնել երեխայի զարգացման աստիճաններին ինչպէս երաժշտական, նոյնպէս և գրական տեսակէտից։ Երգը պէտք է

ընարի գեղարուեստօրէն մայրենի-ժողովրդական և ընդհանուր երաժշտական գրականութիւնից։ Երգելիս (ցանկալի է որևէ գործիքի նուագակցութեամբ) պէտք է խստիւ պահպանել ռիթմի տոկունութիւն, համապատասխան շեշտաւորում և ընդհանրապէս գեղարուեստական մշակման մինիմումը։

Ռիթմը աւելի ճիշտ և պարզ իւրացնելու համար, առաւելապէս զարգացման սկզբնական շրջանում (առաջին երկու տարին), ցանկալի է, որ երգը սովորելիս երեխաները միաժամանակ կատարեն նաև շարժական խաղեր և մասամբ մարմնամարզութիւն։ Սակայն հետագա տարիներում այդ երգին զուգակցող շարժումները պէտք է աստիճանաբար վերացնել։

Երգերի բովանդակութիւնը պէտք է համապատասխանէ մանկան միջավայրին և այն բոլոր երևոյթներին, որ կապուած են բնութեան հետ։ Երգերը պէտք է յարմարեցնել տարբա չորս եղանակների և նրանց հետ կապուած աշխատանքների հետ, նիւթ ունենալով կենդանական և բուսական աշխարհները, մթնոլորտային տեղումները, մեր տնական ծէսերն ու ադաթները։

Երրորդ տարեանից, որպէս տիրապետող սկզբունք, ծրագրի մէջ մտցւում է նոտագրութիւն, այսինքն ձայնագրութիւն այն չափով, ինչ չափով այդ անհրաժեշտ է երգերը գիտակցօրէն ըմբռնելու համար։ Սակայն ձայնագրութեան դասաւանդումը պէտք է լինի բովանդակալից ու կենդանի, բայց ոչ երբեք վերածւի սոսկ անգիտակցական ծանրաբեռնման—տեսական հասկացողութիւններ, տերմիններ ու չոր ու ցամաք ձայնային վարժութիւններ սերտելով։ Որպէս նիւթ առաջարկւում է սոլմիզացիա և սոլֆեջիո անպայման կցւած որոշ գեղարուեստական տեքստի հետ։ Ձայնագրութեան ուսուցման տարիներում պէտք է գրել թելադրութիւններ անցած տեսական դասընթացքի սահմաններում։

Սակայն կլինէր չափազանց միակողմանի, եթէ երեխաներին սովորեցնէինք միմիայն երգ կամ նրա գրութեան արուեստը։ Հանրակրթական աշխատանքի դպրոցը նպատակ չունի աշակերտներից պատրաստել երգիչ—արտիստներ, ինչպէս գրագիտութեան ուսուցումը՝ բանաստեղծներ։ Լաւ բանաստեղծի չափ թանգարժէք է նրան հասկացողն ու գնահատողը. երաժշտութիւնն ինքնին կկորցնէր իր իմաստը, եթէ նա զուրկ մնար բանիմաց ունկնդրից, այն մասնայից, որին պէտք է պատուաստէ իր ոյժն ու կորովը։ Երաժշտութեան ունկնդրութիւնը լաւագոյն միջոցն է զարգացնելու երեխաների գեղագիտական ճաշակը, ընդարձակելու նրա երաժշտական ըմբռնման սահմանները և ընդհանրապէս բարձրացնելու

նրանց թէ երաժշտական և թէ կուլտուրական մակարդակը։

Այս նպատակով, բացի սահմանուած դասերից, տեղի են ունենում յատուկ ունկնդրութեան դասեր։ Որպէսզի վերջինս լինի բեղմնաւոր, նրանց ծրագիրը պէտք է յարմարեցնել մանկան երաժշտական զարգացման աստիճանին, նիւթ ունենալով հէնց իր շրջանի երգերն ու նւագները արտիստիկ կատարումով։ Այդ երգերին աստիճանաբար պէտք է յաջորդէ առանց տեքստի երաժշտութիւնը։ Վերջինս (աբսօլիւտ երաժշտութիւն) հնարաւորութիւն է տալիս ունկնդիրներին ազատ և ինքնուրոյն գործելու իւրաքանչիւրի ֆանտազիան-երևակայութիւնը, խորացնելով նրանց անհատականութիւնը։

Երաժշտութեան տեսութիւնը, որը դասաւանդւում է երրորդ խմբից (երկրորդ կիսամեակից), անպայման պէտք է ըղխեցնել անցած նիւթերի գործնական պարապմունքներից։

Գործնականից, կենդանի օրինակներից հետևցնելով տեսութեան օրէնքները, աշակերտների համար նրանք դառնում են աւելի շոշափելի և հիմնաւորուած։ Պէտք է խոյս տալ գործնական աշխատանքների համար առանձին կարևորութիւն չը ներկայացնող տեսական բարդութիւններից, որոնք մթագնում և անտեղի ծանրաբեռնում են աշակերտների յիշողութիւնը։ Գործնականում պէտք է ոյժ տալ նոտային ընթերցանութեան թէ տեքստով և թէ առանց տեքստի, նմանապէս ձայնի բարձրութեան հիմնովին իւրացման։

Հետագա խմբերի ձայնագրութեան ուսուցման ծրագրի մէջ յիշուած է ձայնի օբերտոնի, ունտերտոնի և առհասարակ նրանց կայուն և անկայուն վիճակների մասին։ Ձայնի կազմութեան յիշեալ վիճակների պարզ պատկերացման վրա է հիմնուած ինտերվալների և նրանց լուծման ամբողջ գաղտնիքը։ Սրա իւրացնելուց յետո աշակերտների համար տեսութիւնը չի լինի այլևս չոր ու ցամաք մեխանիքական զբաղմունք, այլ կենդանի հետաքրքիր գործ, որը նպաստելու է նրա գործնական աշխատանքներին, շարադրութիւններին։

Երգ—երաժշտութեան աշխատանքի դպրոցում մասնակցում են բոլոր աշակերտները։ Երգ—երաժշտութեան ներկա ծրագիրը իր տեսական և գործնական աշխատանքներով ընդգրկում է մի այնպիսի ծաւալ, որի ուսուցումը մատչելի է բոլոր աշակերտներին, չհաշուած լսողութեան հիւանդութեամբ տառապողներին։ Բայց, բացի նորմալ վիճակից, աշակերտութեան մէջ պատահում է մի որոշ կոնտինգէնտ, որը բնականից պարգևատրուած է լինում երաժշտական

համեմատաբար աւելի բարձր ունակութիւններով։ Ահա այս կոնտինգէնտից են ընտրւում դպրոցի երգեցիկ խմբի անդամները։ Խմբական դասը, իր տրամադրութեան տակ ունենալով վերոյիշեալ երաժշտական ուժերը, պէտք է կանգնած լինի ըստ կարելւոյն գեղարւեստական բարձրութեան վրա թէ երգերի ընտրութեամբ և թէ նրանց երաժշտական կատարմամբ։

Ընդհանրապէս այս հարցի վերաբերմամբ դժւար է համառօտ բացատրականով ընդգծել բոլոր հնարաւոր միջոցները։ Երեխաներին երգ-երաժշտութիւն աւանդելու գործում ահագին նշանակութիւն է տրւում հէնց իրան դասաւանդողի հոտառութեանն ու ստեղծագործութեանը, որի պարտականութիւնն է մշակել նորածիլ սերնդի համար այնպիսի պայմաններ, որ երաժշտութիւնը դառնա նրանց համար անբիծ ու վառվռուն ուրախութեան մի աղբիւր։

ԾՐԱԳԻՐ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ԵՐԳԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶԱՅԻՆ ԽՈՒՄԲ (ԱՅԲԲԵՆ. ԲԱԺԻՆ)

Երգեր, պարերգեր, երգ-խաղեր (15-ից ոչ պակաս)։

Ա. ԽՈՒՄԲ

(Շաբաթական 2 դաս)

Միաձայն երգ (15-ից ոչ պակաս)։

Բ. ԽՈՒՄԲ

(Շաբաթական 2 դաս)

Տեսական (*երկրորդ կիսամեակից*)՝

ա. Ընդհանուր հասկացողություն երաժշտական ձայների մասին. նրանց յատկությունը՝ բարձրություն և տևողություն։ Հիմնական ձայներ կամ ձայնաշար. գամմա։

բ. Նոտա, նոտային սիստեմ, սոլ՝ բանալի, օժանդակ գիծ։

գ. Տևողություն—կէս ու քառորդ տևողության նոտաներ։

Գործնական՝

Սոլֆեջիո տեքստով և առանց տեքստի գամմայի սահմանում կէս ու քառորդ տևողությամբ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Լսողությամբ միջին բարդության միաձայն երգեր, նոյնպէս երկձայն canon*-ներ (ոչ պակաս 10 երգից)։*

Գ. ԽՈՒՄԲ

(Շաբաթական 2 դաս)

Տեսական՝

Տակտ, չափ (2/4 և 3/4, համապատասխան բախումներով)։

Տևողություն—1/8, պաուզա։

Կէտ (կէս ու քառորդ տևողության մօտ) լիգա։

Նախատակտ, պակասաւոր տակտ, բեղրեզա։

Գործնական՝

Երգեր և վարժութիւններ. երգածը գրել և գրածը երգել գամմայի սահմանում կէս, քառորդ և ութերորդ տեղութեամբ։

Դ. ԽՈՒՄԲ

(Շաբաթական 2 դաս)

Տեսական՝

Բարդ չափեր ($^4/_4$, $^6/_4$, $^6/_8$, համապատասխան բախումներով)։

Տեղութիւն $^1/_{16}$։

Ալ՛տերացիա—բեմոլ՛, դիեզ, բեկար։

Դիատոնիք ինտերվալներ գամմայի սահմանում։

Դիատոնիք գամմաներ և նրանց կազմութիւնը։

Գործնական՝

Սոլֆեջիո տեքստով և առանց տեքստի։

Երգեր միաձայն և երկձայն, canon-ներ երկձայն և բազմաձայն։ (Դիապազոն-փոքր օկտաւ la, երկրորդ օկտաւ fa)։

Անալիզ—թելադրութիւն։

Ընդհանուր հասկացողութիւն ռիթմիք ֆիգուրաների։

Ե. ԽՈՒՄԲ

(Շաբաթական 2 դաս)

Տեսական՝

Ձայն—նրա ֆիզիքական կազմութիւնը (կլեանգ, օբերտոն, ունտերտոն)։

Ակուստիք կամ բնական գամմա։

Կայուն (դo, մի, սol՛) ձայներ, նրանց ձգողական բնոյթը։

Անկայուն (ռէ, ֆա, լեա, սի) ձայներ, նրանց կենտրոնաձիգ բնոյթը։

Դիսոնանսներ, իբրև անկայուն ձայներ։

Կոնսոնանսներ, իբրև կայուն ձայներ։

Երգի մեղեդիք կազմութիւնը՝ ֆրազա, նախադասութիւն, պարբերութիւն, կադանս, իբրև երգի եզրակացում։

Գործնական՝

Շարադրութիւն պարզ երգերի (8–16 տակտ)։

Ընդհանուր ծանօթութիւն լարերի մասին։

Ընդհանուր հասկացողութիւն բարդ և խառն չափերի և բանալիների մասին։

ԾՐԱԳԻՐ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ

I ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ

(8—13 տարեկան աշակերտների համար)

Մանկապարտիզային խմբի զբաղմունքները տարվում են մանկապարտիզային ծրագրով եւ մեթոդով։

Ա. ԽՄԻՄԲ

(Մօտաւորապէս 8—9 տարեկան)

I

Նախապատրաստական վարժութիւններ. ճկարել տպաւորութեամբ.

Գրատախտակի, տուգի կամ գետնի վրա երկու ձեռքով ճուռածիր և շրջանաձև վարժութիւններ։ Օրինակ՝ ակնոցներ, սալոր, բանալի, կեռաս, օղակ, կլկալ (обруч), *ապարանջան, անիւ, շրջանների մէջ շրջաններ՝ 2, 3, 4 և այլն։ Երեխաները միմիայն սինեմատիկ գծերով (իրերի շարժումները զանազան դիրքերով) նկարում են զանազան գործողութիւններ, յիշեալ առարկաների հետ կապված (երեխան վազում է կլկալի հետից և այլն)։*

II

Նկարել իսկականից եւ յիշողութեամբ.

Նկարել ճուռածիր, շրջանակ, քառակուսի ու քառանկիւնի ձև ունեցող առարկաներ՝ պալիտրա, ակնոց, հայելի, շրջանակ, ափսէ, դայիրա (դափ), սինի, քափկիր, կլոր շրջանակ (պատկերի)

վահան, թիթեռ բռնելու գործիք, անիւ, կեռաս, նշենու և հակակի տերև, քառակուսի կապոց, դրօշակ, պատուհան, տետրակ, գիրք, ծրար, բաց նամակ, շահմատի տախտակ, պայուսակ, քառանկիւնի դրօշակ, քառանկիւնի պատուհան, ֆռռան և այլն։

III

Աշխատանք վրձինով եւ ներկերով.

Հիմնական գոյներ՝ կարմիր, դեղին և կապոյտ. նրանցից առաջացած բաղադրեալ գոյներ—դեղնից և կապոյտից՝ կանաչ, դեղնից և կարմրից՝ նարնջագոյն, կարմրից և կապոյտից՝ մանիշակագոյն։ Նկարել պարզ տերևներ, պէյզաժներ։

IV

Պատկերազարդել.

Մակական պատմուածքներ, գործողութիւններ և ստորագրել նրանց անունը։ Ցատկացնել նաև ժամեր ազատ ստեղծագործութեան։ Ցանկալի է, որ այդ պատկերները ներկուէին գունաւոր մատիտներով։

V

Պատկերների դիտողութիւն.

Գեղեցիկ արտայայտուած և մանկական աշխարհին մօտ յայտնի արուեստագէտների նկարները դիտողութեան նիւթ դարձնել խմբի սենեակում (դասարանում)։ Օրինակ՝ ցուրտը, քաղցը, աշխատանքը և ուրախութիւնը։

VI

Կոլեկտիւ աշխատանք.

Խմբի սենեակում (դասարանում) գրատախտակի կամ մեծ թղթի վրա մի որևէ նիւթ ընդհանուրի զբաղմունքի առարկա դարձնել. իւրաքանչիւրն իր մասնակցութեամբ լրացնում է ամ-

բողջ պատկերը, օրինակ՝ նկարում են դպրոց, տօնածառ, պարտէզ և այլն։

Բ. ԽՈՒՄԲ

(*Մօտաւ. 9—10 տարեկան*)

I

Նախապատրաստական վարժութիւններ. նկարել տպաւորութեամբ.

Աղեղնաւոր, կարթաձև և լատինական S—աձև վարժութիւններ։ Մարդու, ճագարի, կատուի և թռչունների սիմեմատիկ (շարժողութիւնների) նկարելու վարժութիւններ։

II

Նկարել իսկականից եւ յիշողութեամբ.

Եռանկիւնի, քառանկիւնի և զանազան պարզ ձև ունեցող առարկաներ։ Եռանկիւնի քանոն, գլխարկ, պալիտրա, դրօշակ, նաւթի տաքան, թաւա, ծաղկաման, թմբուկ, չորացրած տերևներ, մանդաղ, թիակ, մուրճ, գերանդի, փոցխ, դանակ, սրճաման, ըրիչ, թէյաման, գրատախտակ, պատկեր, փուքս, ջրաման, պուլիկ, փարչ, խելաղա և այլն։

III

Աշխատանք վրձինով եւ ներկերով.

Միապաղաղ գոյնով ծածկել որևէ մակերևոյթ՝ պտուղների սիլուէտներ (տանձ, խնձոր, բողկ և այլն)։ Արևի սպեկտրի պարզ դասաւորում շրջանի մէջ երեք հիմնական գոյներով։ Նկարել պարզ բոյսեր տերևներով և կոկոններով։

IV

Պատկերազարդել.

Նիւթերը վերցնել աւանդւող բոլոր առարկաներից և աշակերտի իրեն յիշողութիւնից և բազմակողմանի ծանօթութիւնից յետո թողնել աշակերտի ինքնուրոյն պատկերացման։ Օրինակ՝ տմառային տպաւորութիւններ, մանկական աշխարհի հէքիաթներ, աշուն, ձմեռ, ձիւնահալք, Նոր-տարի, Բարեկենդան։ Ազատ բացօդեա աշխատանքներ։

V

Պատկերների դիտողութիւն.

Մանկան աշխարհից նկարւած յայտնի նկարիչների աշխատանքները խմբի սենեակում (դասարանում) դիտողութեան նիւթ դարձնել։ Օրինակ՝ ուսման ծարաւ փողոցային մանուկը, երեխան խնամում է իր շնիկին, թռչունների խնամքը իրենց ձագերին և այլն։

VI

Կոլեկտիւ աշխատանք.

Նկարում են ամբողջ խմբով ժողովրդական տօներ, հարսանիք, դիւղական աշխատանք, կալ, հունձ, ցանքս և այլն։

Դ. ԽՈՒՄԲ

(Մօտաւ. 10—11 տարեկան)

I

Վարժութիւններ.

Սիմմետրիկ վարժութիւններ. սրտաձև, ոլորաձև, քառակուսու, եռանկիւնու, շրջանի, վեցանկիւնու, ութանկիւնու վարժութիւններ։

II

Նկարել իսկականից եւ յիշողութեամբ. գլխաւոր առարկաներով.

Կաթսա, թէյաման, կուլա, գիթար, լապտեր, թիթեռ բռնելու գործիք, շիշ, լամպար, ծաղկաման, թիթեռ, ժամացոյց, հերբարիում պարզ տերևներից, թղթէ լապտեր, տնակ, գրաֆին, շիշ, ջրաղաց, բարդ տերև, քիլա, կուլա, կացին, օղու ըմպանակ, ձու, երաժշտական փողաւոր գործիք, սազ, դայիրա, աքաղաղ, հաւ եւ այլն։

III

Վրձինի եւ ներկերի յարմարութիւններ.

Հիմնական գոյներից քաջ. մերթ ուժեղացնել կարմիրը, մերթ՝ դեղինը, մերթ՝ կապոյտը։ Կազմել արևի սպեկտր շրջանի մէջ, ներկել նկարուած հերբարիում, լապտերներ, նկարել սիլուէտներ, խտացնել և նօսրացնել գոյները եւ այլն։

IV

Մոդելաժ.

Խորանարդի, քառանկիւնի, եռանկիւնի պրիզմաների ճշգրիտ բացուածքը և նախագծումը։ Նկարել խմբի սենեակի (դասարանի) յատակագիծը, բացուածքը։

V

Պատկերազարդել.

Նիւթեր բոլոր առարկաներից, բազմակողմանի դիտողութիւնից յետո աշակերտների ազատ ժամերին պատկերացնելու և նկարելու աշխատանքներ տալ։ Օրինակ՝ ամառային տպաւորութիւններ, հէքիաթներ, աշուն, Նոր-տարի, ձմեռ, հանդէս, գարուն եւ այլն։

VI

Պատկերների դիտողութիւն.

Ընդհանուր խմբի (դասարանի) դիտողութեան և վերլուծութեան նիւթ դարձնել աւելի բարդ հոգեբանութիւն ունեցող արուեստագէտների աշխատանքները (էքսկուրսիաներ դէպի պատկերասրահ)։ Նիւթ.—մայրական սէր, դթութեան քոյրեր, վիրաւորը, յաղթութիւն, պարտութիւն, անձնազոհութիւն և այլն։

VII

Կոլեկտիւ աշխատանք.

Նկարում են օրաներ, քոչ, քարաւան, թռչունների չուն, մարգագետին, պարտէզ և այլն։

VIII

Գեղարուեստի պատմութիւն.

Բարէ դար։ Ծանօթութիւն նախապատմական մարդու գործիքների հետ, համեմատելով նրանց համապատասխան գործիքների հետ (էքսկուրսիա դէպի ազգագրական թանգարան)։

Դ. ԽՈՒՄԲ

(Մօտաւ. 11 — 12 տարեկան)

I

Նկարել իսկականից գլխաւոր ստուերներով եւ գոյներով.

Շահմատի տախտակ, գիրք, թղթապանակ, քարէտախտակ, տետրակ, պոստարկղ, շրջանակ, պալիտրա, պարզ ծաղկամաններ, կճուճ, պուտուկ, դոյլ, տակառ, ծանրաքարեր, կողով, ջրաման և մոմակալ. նկարել երեք գիրքով՝ ուղղահայեաց, հորիզոնական և թեք, աջ կամ ձախ։ Նկարել թիթեռներ գոյներով, փեսուրներ, երեխաները խաղալիս, աշխատելիս և այլն։

II

Վրձինի եւ ներկերի վարժութիւններ.

Սրտաձև վարժութիւններ, վրձինի իւրայատուկ վարժութիւններ, աջ և ձախ հպումներով նկարներ, հերթաբիւմներ՝ առանց ուրուագծերի, ուղղակի վրձինով։ Պէյզաժներ՝ աշուն, ձմեռ, գարուն, ամառ։

III

Ոճազարդել.

Սրտաձև կամ զանազան ձև ունեցող տերևներով, կոկոններով, ծաղիկներով և պտուղներով զարդարել գրքի կաղմ, ափսէ, դասացուցակ, օրացոյց, ձու և այլն։

IV

Մոդելաժ եւ երկրաչափական ձեւերի հաստատութիւն.

Բուրգ, գլան և կոն (գծագրել). բացուածք (արտաքին մակերևոյթը)։ Գծերի տեսակները՝ ուղիղ, կոր, օձաձև, բեկբեկուած, կէտադիր և խառը։ Զուգահեռական գծեր. գծերի դիրքերը՝ ուղղահայեաց, հորիզոնական և թեք։ Անկիւնները՝ ուղիղ, բութ և սուր։ Եռանկիւնի մակերևոյթներ՝ հաւասարակողմ և անհաւասարակողմ, հաւասարասրունք և ուղղանկիւն։ Քառանկիւնի մակերևոյթներ՝ քառակուսի, քառանկիւնի, բոմբ, սեղանանման, զուգահեռագիծ։ Վերջապէս գծագրել ճշգրիտ շրջան, ձուաձև, ձուածիր և պտտուն։ Նկարել դպրոցի յատակագիծը իր շրջակայքով։

V

Պատկերազարդել.

Աշակերտները գրում են ինքնուրոյն շարադրութիւններ և պիէսներ. պէտք է խրախուսել, որ այդ աշխատանքները նկարազարդուին գրքի ձևով։

VI

Կոլեկտիւ աշխատանք.

Պատրաստում են սանձաններկեր, վրձիններ, շրջանակներ, հիմնաներկ և նկարում են իրենց պիէսների համար դեկորացիաներ և պլակատներ։

VII

Գեղարուեստի պատմութիւն.

Բրոնզի և երկաթի շրջան (էքսկուրսիա դէպի թանգարանները (մուզէյները) և պատկերասրահները)։

Ե. ԽՈՒՄԲ

(Մօտաւ. 12—13 տարեկան)

I

Նկարել իսկականից գլխաւոր եւ երկրորդական սաւերներով եւ ջրաներկերով.

Մեծ թէյման, բարդ տերևներ, պուտուկ, կօշիկ, լուցկու տուփ, երկրագունտ, բարդ ծաղիկներ, երկու առարկաների կոմբինացիաներ, թռչուններ, խրտուիլակներ, կատու, շուն, հաւ, սագ, ճագար՝ իրենց շարժուն տարբեր ձևերով. օրինակ՝ նստած, կանգնած, պառկած, գնալիս, վազելիս և այլն։

II

Ջրաներկերի եւ վրձինի վարժութիւններ.

Արևի սպեկտրը ծաղիկներից պատրաստուած. վրձինի բարդ վարժութիւններ և հպումներ երկարացնելով և այլն։ Նկարել բնականից իրեր և պարզ, հետզհետէ բարդ հերթարիումներ ուղղակի վրձինով։

III

Ոճազարդել.

Հայկական ճաշակով զարդարել ափսէ, գրքի կազմ, օրացոյց, գորգ և այլն։ Նիւթ վերցնել բոյսերից, թիթեռներից, կենդանիներից, հանքերից և այլն։ Ցանկալի է պահպանել ընդհանուր ոճը. օրինակ՝ նոան տերևը, կոկոնը, ծաղիկը, պտուղը և ճիւղերը իրենց գոյներով և ձևերը օգտագործել միևնոյն աշխատանքի մէջ։

IV

Առարկաների եւ ձեւերի ճոգրիտ գծագրումը—բռնած տեղը, կտրուածքը եւ հաստութիւնը.

Սեղան, աթոռ, կշռաքար, արկղ, թէյաման, տաշտ։ Նկարել շրջանի մէջ կանոնաւոր եռանկիւնի, քառանկիւնի և բազմանկիւններ։

V

Պատկերազարդել.

Ինքնուրոյն շարադրութիւններից պատրաստում են փոքրիկ գրքոյկներ, որոնց բացի պատկերազարդելուց զարդարում են մի որևէ բոյսի կամ կենդանու ձևերով, պահպանելով ընդհանուր ոճը։ Աշխատանքի համար ժամանակ է տրւում 2—3 ամիս։

VI

Կոլեկտիւ աշխատանք.

Պատրաստում են բեմի ճշգրիտ սխեման և բոլոր նիւթերը, կապւած դպրոցական բեմ ստեղծելու հետ։

VII

Գեղարուեստի պատմութիւն.

Հայկական արուեստի պատմութիւնը համառօտ և ընդհանուր գեղարուեստի պատմութիւնից գլխաւոր դարագլուխները։

Ծանօթութիւն.—Էքսկուրսիաների ժամանակ աշխատել ըստ կարելւոյն, նոյնիսկ առաջին տարւանից, սովորութիւն դարձնել, որ աշակերտներն իրենց հետ ունենան մատիտ և ալբոմներ կամ տետրակներ՝ ընութիւնից ուղղակի տպաւորութիւն պատկերացնելու համար։

ԱՐԽԻՎ ՀՐԱՊԱՐԱԿ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P. Публичная Библиотека
7/XI. 1922
Именна, Маяковского
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԶԵՌԱՐԻԵՍՏԻ ԾՐԱԳԻՐ

I ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ

(7—13 տարեկան երեխաների համար)

ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶԱՅԻՆ ԽՈՒՄԲ

(Մօտաւորապէս 7—8 տարեկան)

ՆԻՒԹԵՐ ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ.—Ծղօտ, թուղթ, փայտ, աւազ, հող, ծառի ճիւղեր, տերևներ, բահ, թիակ, դոյլ, մկրատ, դանակ։

Աշխատանքներ պարտէզում գարնանը եւ աշնանը

Պատրաստել հողից և աւազից՝ թումբեր գետնի վրայ. քարերից՝ ցանկապատեր, քարայրներ, բլրակներ, պատեր. փայտից՝ ցանկապատեր, կամուրջներ, հեռագրասիւներ. ծառի ճիւղերից՝ ծառեր և այլն։

Պէտք է գաղափար տալ բոլոր նիւթերի մասին գործածութիւնից առաջ, իւրաքանչիւր խմբի պատրաստականութեան համաձայն, այն է՝ այդ նիւթերի բնական, թէ արհեստական լինելու, նրանց յատկութեան, ձևերի և գործածութեան մասին։

ԾՂՕՏ.—ա. Սովորեցնել երեխաներին փաթաթման ձևով հիւսել պարաններ։

բ. Սովորեցնել հիւսելով պատրաստել պարաններ 2—3, 3—4, 4—5, 5—6 ծղօտով։

գ. Սովորեցնել այդ պարանները ծալծլելով կամ զուգահեռական ձևով և փաթաթելով իրարու կողքի, պատրաստել դանազան փոքրիկ տափակ ձևեր՝ ձուածիր, ձուաձև, քառակուսի։

Այդ ձևերը կարելի է գործադրել որպէս փոքրիկ գորգեր պնակի կամ կաթսայի տակ դնելու հարթութիւններ։

ԹՈՒՂԹ.—Եթէ պայմանները ներեն, տալ մի քանի տեսակ դունաւոր թղթեր զանազան խաւերով։

ա. Կերտել ժապաւէններ զանազան լայնութեամբ, պատրաստել շղթաներ, հիւսածքներ (ծալծլելով)։ Եթէ թուղթը բարակ և փափուկ է, կարելի է ոլորել և հիւսել նոյն ձևերով, ինչպէս ծղօտը։

բ. Մէկ կտոր թուղթ ծալել մէջտեղից և կտրատել մի շարք զուգահեռական գծեր, բայց ոչ մինչև ծայրերը, ապա բաց անել և այդ գծերի միջից անցկացնել գունաւոր ժապաւէններ զանազան ուղղութեամբ, որից կստացուին շահմատի տախտակներ և գորգեր։

գ. Կտրած ժապաւէնները կարելի է զանազան երկարութեամբ և լայնութեամբ կտրել և կպցնել սօսինձով թղթի վրայ, որով կստացուին զանազան իրերի պարզ ձևեր. օրինակ՝ սանդուխք, լուսամուտ, նստարան, սեղան, վանդակ, աթոռ և ուրիշ նման առարկաներ։

դ. Թղթի կտորները ծալծլելով սովորեցնել պատրաստել աքաղաղ, նաւակ, աղաման և այլ նման իրեր։

ե. Բացի վերոյիշեալ պարապմունքներից, երեխաներին պէտք է տալ նաև ազատ աշխատանքներ թէ կտրտելու և թէ դասաւորելու։

ՓԱՅՏ ԵՒ ԴԱՆԱԿ.—Կտրել, սրել և հարթել փայտի կտորները և գործադրել պարտէզի մէջ կատարուող աշխատանքների ժամանակ։

Ա. ԽՈՒՄԲ

(Մօտաւ. 8—9 տարեկան)

ՆԻՒԹԵՐ ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ.—Ծղօտ, թուղթ, կաւ, սօսինձ, թել, մկրատ, դանակ, տսեղ։

ԾՂՕՏԻՑ.—ա. Պատրաստել յատակներ վերոյիշեալի պէս, հիւսել ղրանց վրա մէկ կամ երկու շրջանից թեք շուրթեր, այսպիսով կստացուին փոքրիկ սալաններ։

բ. Դարսել ծղնօտներ իրար մօտ և կապկպել թելով կամ ծղնօտով, այդ կերպ պատրաստել զանազան հարթութիւններ և գործադրել որպէս փոքրիկ խոիրներ կամ դռան ու լուսամուտի ծածկոցներ։

ԹՂԹԻՑ.—ա. Կտրատել ալիքաձև, կորաձև, ձուաձև և կլոր. այդ ձևերը կպցնել թղթի վրա սօսինձով՝ ձևակերպելով որոշ տեսարաններ. օրինակ՝ բլուրներ, սեղանաձև լեռներ, առուակներ,

լեռների յետևից լուսին, արեգակ, թմբի վրա գնդակ, ընի մէջ ձու, ջրի վրա նաւակ և այլն։

բ. Կարտել պտուղներ՝ վարունգ, գազար, խնձոր, տանձ, սալոր և նման պտուղներ, իրեր՝ ակնոցներ, անիներ, կողմներ, պնակներ և նման իրեր. կենդանիներ՝ որդ, օձ, ձուկ, մուկ և նման պարզ ձևի կենդանիներ և միջատներ։ Տեսարաններ պարզ սուերանկարներ։ Առարկաներ՝ կահ-կարասիք, գործիքներ, տնակներ և այլ նման իրեր։

ԿԱՒԻՑ.—ա. Պատրաստել ձուաձև և գնդաձև իրեր՝ գնդակ, գունդ, գլանակ, տանձ, խնձոր, ձու, վարունգ։

բ. Գունդը փոռացնելով կստացուին զանազան ձևերի ամաններ՝ պնակ, աղաման, թանաքաման, մոխրաման և այլն։

գ. Ազատ աշխատանքներ—որովհետև կաւը հեշտ ձևափոխուող նիւթ է, այդ պատճառով տալ երեխաներին ազատ աշխատանքներ, նիւթ առնելով հէքիաթներից, առակներից, զբօսանքներից և այլն։

Եթէ պայմանները ներեն, ունենալ կանաչ կաւ։ Այդ տեսակի կաւը պէտք է գերադասել դեղին գոյնի կաւից, որը գործ է ածւում միմիայն ամանների համար և թրծելուց չի ճաքճաքւում. կանաչ կաւը շատ նուրբ է և յարմար է երեխաների համար՝ թէև չի թրծւում։ Կանաչ կաւը լաւ չորացնելուց և միքիչ մանրացնելուց յետո միայն կարելի է թրջել, իսկ դեղին կաւը անմիջապէս թրջել կարելի է։

ՇՈՐԻ ԿՏՈՐԻՑ.—Տեսակի թերթի չափ շորի մի կտոր տալ երեխաներին և սովորեցնել մի քանի տեսակի կարի ձևեր՝ ուղիղ կար, մեքենակար (յետկար), դարձկար և այլն։ Պատրաստել տոպրակներ զանազան մեծութեան՝ մատիտների, թանաքամանի, գրքերի համար և այլն։

ԳՈՒՆԱՒՈՐ ԹԵԼԵՐԻՑ.—Եթէ պայմանները ներեն, տալ երեխաներին գունաւոր թելեր և հաստ թուղթ, որի վրա գծագրելուց յետո գունաւոր թելերով կարել կոր և անկիւնաւոր գծեր, ժանեակներ (հաշիաներ), պարզ ձևի տուներ, պտուղներ, տերևներ և տեսարանների սուերագծեր։

ՓԱՅՏ ԵՒ ԴԱՆԱԿ.—Կոտրած փայտերը իրար մէջ հաղցնել ճեղքելով սիսեռով կամ կաւի գնդակիկներով և շինել անկիւնաւոր հաշիաներ, սանդուխք, վանդակ, աստղ և այլն։

Մանօրուրիւն.—Օգտուել մայրենի լեզուի, մատեմատիկայի և աշխարհագրութեան նիւթերից և օժանդակել այդ առարկաներին լայն չափով։

Բ. ԽՈՒՄԲ

(Մօտաւ. 9—10 տարեկան)

ՆԻՒԹԵՐ.—Ծղօտ, թուղթ, կաւ, կտորեղէն, թոկեր, զանազան թելեր։

ԾՂՕՏԻՑ.—ա. Պատրաստել զանազան ձևի ու մեծութեան յատակներ։

բ. Յատակների կողքերից բարձրացնել զանազան բարձրութեան պատեր, լայնացնելով կամ նեղացնելով։

գ. Պատրաստել կանթեր և ամրացնել պատրաստուած հիւսածքի պատերին, որով կստացուին զանազան ձևի զամբիւղներ, պայուսակներ, սալաներ և այլն։

դ. Անցնել հիւսածքի նուրբ ձևերը՝ ապագայում պարզ գլխարկներ և նման իրեր պատրաստելու համար։ Պատրաստել գլխարկի փոքրիկ մոդել, հացի և մրգի պնակներ և այլն։

ԹՂԹԻՑ.—Կտրատել եռանկիւնիներ, քառանկիւնիներ, պտուղներ, բոյսեր, ծառի ընձեր, ճիւղեր, տերևներ, հացահատիկներ, ընկոյզ, սալոր, կեռաս, պամիդոր և այլն։ Գործիքներ և կահկարասիք՝ զնդան, մանգաղ, մուրճ, գութան, սեղան, զանազան ձևերի պնակներ, շշեր, ճրագ, լապտեր և այլն։ Կենդանիներ՝ այծ, էշ, թիթեռ, մորեխ, բաղ, աքաղաղ և այլն։ Մարդը պարզ ձևով։

ԿԱՒԻՑ.—ա. Պատրաստել փոքրիկ աղիւսներ, սիւնակներ, շերտեր և խորանարդ։ Այս իրերը չորացնելուց յետո գործադրել շէնքերի համար։ Պատրաստել նստարան, սանդուխք, յուշարձան, ցանկապատ, սիւներով և լուսամուտներով տուն։

բ. Պատրաստել տալ բոզկ, գազար, ընկոյզ, կեռաս, շիշ, մանգաղ, զնդան, տակառ, տաշտ և այլն։

գ. Պատրաստել տալ անօթներ՝ ափսէ, բաժակ, պնակ, պուտուկ, կաթսա, կոնք։

դ. Ազատ աշխատանքներ։

ՇՈՐԻ ԿՏՈՐ, ԹԵԼ, ԱՄԵՂ.—Սովորեցնել կրկնակի կար, վրակար, ժապաւէն դարձկարով։ Այս ձևերով կարելի է կարել բարձի երես, կրծքակալ, անձեռոցիկ։ Կարելի է շորի վրա կարել տառեր, բառեր, լոզունգներ առողջապահութեան, աշխատասիրութեան և կարգապահութեան վերաբերեալ։ Սովորեցնել կոճակներ կարելը։

ԹՈԿ, ԹԵԼ ԵՒ ՃԱՂ (ՄԻԼ).—Տալ երեխաներին զանազան տեսակի թելեր՝ բրդի, բամբակի, մետաքսի, կանեփ և այլն։

Սովորեցնել թելից երկու ճապով շորտիկ գործելը, երեսի աջ հատ գցելը, շուռ տված հատ գցելը, ձգողիկ, շաբիզ, հատ պակասեցնելը, հատ վերջացնելը։ Պատրաստել կրծքակալ, գոտի, թենոց, պարկ և նման իրեր։ Սովորեցնել թոկերի մի քանի տեսակ հիւսածքներն ու կապերը. աջակողմեան կապ, ձախակողմեան կապ, երկտակ կապ։ Գործել պայուսակներ, որսորդական պարկեր, ցանցեր և նման իրեր։

ՓԱՅՏ, ԴԱՆԱԿ ԵՒ ԲԻԶ.—Կտրել փայտի կտորներ և ծակոտել բզով ու պատրաստել զանազան ձեւի իրեր՝ աթոռներ, մահճակալներ, պարզ ձեւի սայլեր, փոցխեր, լուսամուտներ, սիւներ, վանդակներ, պատշգամբի ճաղեր և այլն։

Ծանօթութիւն.—Օգտուել մայրենի լեզուի, մատեմատիկայի և աշխարհագրութեան նիւթերից լայն չափով։

Գ. ԽՈՒՄԲ

(Մօտաւ. 10—11 տարեկան)

ՆԻՒԹԵՐ ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ.—Ծղօտ, թուղթ, կաւ, ուռի ճիւղեր, կտորեղէն, թոկ, թել, տեղ, դանակ, մկրատ, կաւի գործիքներ, ճապ, հեղուն։

ԾՂՕՏԻՑ.—Պատրաստել զամբիւղների և արկղների խուփեր (կափարիչներ), նրանց հանգոյցները և փականները ու ապամրոզիական զանազան ձեւի պայուսակներ, զամբիւղներ, կողովներ, գլխարկներ, գնակներ և նման իրեր։

ԹՂԹԻՑ ԵՒ ՍՏԻՍՐԱԹՂԹԻՑ.—ա. Պատրաստել խորանարդներ, քառանկիւնի և եռանկիւնի հատուածակողմներ (պրիզմաներ) մաթեմատիկական ճշտութեամբ։ Կարտակով պատրաստել կնդգանիներ, պտուղներ, պարզ և բարդ ձեւերի տեսարաններ, լապտերներ։

բ. Պատրաստել թղթից զանազան մեծութեան տետրակներ, յիշատակարաններ։

ԿԱՒԻՑ.—ա. Պատրաստել պրիզմա, կոնուս, բուրգի նման իրեր։

բ. Պատրաստել շրջանի ըէլիէֆ քարտէզը։

գ. Սովորեցնել աւազի օգնութեամբ կազապարել զանազան անօթներ։

Ծանօթութիւն.—Զոր աւազը պէտք է ածել շորի մէջ և բերանը ամուր փակել, տալով շորին զանազան ձեւեր։ Կաւը լաւ

արորելուց յետո պէտք է հաւասար շերտով ծածկել աւազով լիքը շրջը՝ շինելով հանդոյցի մօտ ամանի բերանը։ Ապա պէտք է քանդել կապը և թափել աւազը ու հանել կտորը, որով կստացուին զանազան ձևի անօթներ։

դ. Պատրաստել՝ նուռ, նարինջ, գեռնախնձոր, պամիդոր, կաղամբ, սեղան, նստարան, մոմակալ, գութան և այլն։

ՈՒՌԻ ՃԻՒՂԵՐԻՑ.—Կատարել հիւսուածային զանազան աշխատանքներ։ Պատրաստել կողովներ, զամբիւղներ, ձկան թակարդներ և նման իրեր։

ԿՏՈՐԵՂԷՆ, ԹԵԼ, ԱՍԵՂ.—Անցնել վրակար, ամրակար։ Կարել թաշկինակներ, գոգնոցներ, լուսամուտի ծածկոցներ և զանազան իրերի համար շապիկներ։ Շապիկները ձևելիս օգուտել սանտիմետրից՝ չափելով կտորների լայնութիւնը, երկարութիւնը։ Աւանդել կարկատան անելը։

ԹՈԿ, ԹԵԼ ԵՒ ՃԱՂ, ՀԵԼՈՒՆ (кручек).—Գործել գուլպայի ճիտքը, ձեռնոցներ, պաճիճներ և ուրիշ պիտանի իրեր։

Սովորեցնել հելունով զանազան ձևի հիւսուածքներ ու օղակներ, շղթաներ, սիւնեակներ (столбцы), ծակոտկէն բանուածքներ, կապեր և ոլորուածքներ։ Հիւսել ժանեակի պարզ ձևեր։ Գործել պայուսակներ կանեփի թելից զանազան ձևի հանդոյցներով և օղակներով։ Պատրաստել փոքրիկ կօշիկներ։

Ծանօթութիւն.—Սերտ կապ պահպանել նոյն խմբին աւանդող միւս առարկաների հետ, օժանդակելով նրանց։

Դ. ԽՈՒՄԲ

(Մօտաւ. 11—12 տարեկան)

ՆԻՒԹԵՐ ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ.—Կանաչ և դեղին կաւ, թուղթ, սուտաթուղթ, պապիէ-մաշէ, կտորեղէն, թել, դանակ, մկրատ, մուրճ, սղոց, մամուլ (пресс)։

ԿԱՆԱՉ ԿԱՒԻՑ.—ա. Պատրաստել կաւէ տախտակ, որի վրա ծեփել կէս կամ ամբողջ բէլիէֆ տերևներ, ծաղիկներ, էսկիզներ, հացահատիկներ, օրնամէնտներ, խաղող, կեռաս, բալ, թիթեռ, ճնճղուկ, աղաւնի, շուն, մուկ և այլն։

բ. Այդ ձևով պատրաստել նաև աշխարհագրական քարտէզներ։

ԴԵՂԻՆ ԿԱՒԻՑ.—Կողապարել զանազան ձևի պնակներ, ամաններ և այլն (կողապարը կարելի է պատրաստել նոյն կաւից կամ գաճից՝ գիպսից)։

ԹՂԹԻՑ, ՍՏԻԱՐԱԹՂԹԻՑ.—ա. Սովորեցնել գրքեր ու տետրակներ կարել ու կազմել։

բ. Նախապէս գծագրելով տուփերի յատակագծերը, սուրբաթղթից պատրաստել տալ զանազան ձևի տուփեր իրանց բաժանմունքներով և խուփերով։ Ապա պէտք է ներկել ու զարդարել այդ տուփերը և գործադրել դպրոցական կարիքների (օրինակ՝ հանքերի, բոյսերի հաւաքածուների) համար։

ՊԱՊԻԷ-ՄԱՇԷ.—Բոլոր այն իրերը, որոնք պատրաստուել են կաւից, կարելի է կաղապարել նաև պապիէ-մաշէի զանգուածով։ Պապիէ-մաշէից քարտէզներ։ Կարելի է այս իրերը ներկել իրենց համապատասխան գոյներով։

ԿՏՈՐԵՂԷՆ, ԹԵԼ, ԱՄԵՂ.—Սովորեցնել կոճկամայր (петля), հանգոյցի կար, զարդակար (мережки)։

Երեխաներին տալ առաջուց ձևած շապիկներ կարելու համար։

Տալ երեխաներին զարդարելու թաշկինակներ, երեսսրբիչներ, ձեռնոցներ։

Սովորեցնել ներկելու տարբերակն եղանակները՝ սոխով, ընկուզի կեղևով, դեղին կոճով և այլն։

ԹՈԿ, ԹԵԼ ԵՒ ՃԱՂ.—Գործել գուլպայի ներքևի մասը, թաթը, պատրաստել գուլպաներ, ձեռնոցներ, վզնոցներ, շապիկներ, պարկեր, գլխարկներ, ոտնամաններ և այլն։ Սովորեցնել այս իրերի կարկատան անելը։

ՓԱՅՏ, ԲԻԶ, ՄՈՒՐՃ, ՄՂՈՑ, ՌԱՆԴԱ (рубанок).—Փայտի կտորները կտրելուց հարթելուց, ծակելուց յետո՝ պատրաստել այն բոլոր իրերը, որոնք պատրաստուում էին նախընթաց տարում, սակայն աւելի բարդ կերպով և աշխատելով, որ բոլոր հանգոյցները և կապերը լինին նպատակայարմար և համաչափ։ Անցնել փայտ հարթելու և ներկելու եղանակները։

Մասնաւորապէս.—Սերտ կապ պահպանել նոյն խմբին աւանդող միւս առարկաների հետ և օժանդակել նրանց։

Ե. ԽՈՒՄԲ

(Մօտաւ. 12—13 տարեկան)

ՆԻՒԹԵՐ.—Տալ այն բոլոր նիւթերը, որոնք տրուում էին նախընթաց տարիներում, աւելացնելով փայտի աշխատանքների համար հարկաւոր գործիքները և գաճը (գիպսը)։

Այս խմբում արտադրական պրոֆեսիոնալ արհեստանոցների ուսուցիչի հիմքն է դրվում։

Այս դասընթացքում աշակերտները շարունակում են ձեռք բերել սիստեմատիկ տեղեկություններ ձեռարվեստային պարապմունքների վերաբերմամբ։ Պատրաստում են իրենց կարողության համաձայն այն բոլոր իրերը, որոնք հարկավոր են գալիս իրենց ու իրենցից փոքր աշակերտների դպրոցական պարապմունքների ժամանակ և բաշխարարում են իրենց ինտեսական պէտքերը։

ԿԱՒԻ աշխատանքների վրա ուսանում են սմաններ չոր-բացնելու և թրծելու աշխատանքները։

ՓԱՅՏԻ աշխատանքներն ընդունում են ավելի սիստեմատիկ բնավորություն։

Ծանոթացնել գործիքների նշանակության, յատկության, գործածության և վարելու եղանակների հետ։

Պատրաստել քանոններ, կլոր փայտեր, զանազան հաստության հարթ տախտակներ։

Անցնել մի քանի ձևի կապեր. սոսնձել, ներկել, վերնիճել (լաքել)։

Պատրաստել փոքրիկ արկղներ, սանդուխք, եռանկիւնիներ և այլն։

ԿԱՐ ՈՒ ՁԵՒ.—Սովորեցնել չափել, գծագրել և կարել։ Անցնել ձևելու տարրական տեսակէտները։ Պատրաստել շապիկ, վարդիկ և այլն։

Ծղոտը, պապիէ-մաշէն, ուռի ճիւղերը, սաւարաթուղթը դառնում են այն անհրաժեշտ նիւթերը, որոնցից աշակերտները պատրաստելու են իրենց պահանջներին համապատասխան իրեր և պիտոյքներ դպրոցի գործածության համար։

Ծանօթութիւն.—Սրան կցւում է ձեռնարկների ժամանակաւոր ցուցակ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
Ереванъ, Мясникян 41
Ա. ՄԵՍՍԱՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0836043

U 92
148